ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ապրիլի 2026 թվականի № -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի №255Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 41-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՄԱՍՖԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի մարտի 6-ի գրությունը, կից ներկայացված Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կողմից 2024 թվականի դեկտեմբերի 6-ին տրամադրված №542-24 ջրօգտագործման թույլտվությունը (այսուհետ՝ №542-24 ջրօգտագործման թույլտվություն), որում ջրառի վայր նշված է «ՀՀ Շիրակի մարզ, Բաղրամյան համայնքի Շենիկ բնակավայրի վարչական տարածք», մինչդեռ «Վարդանանց» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզավորման անհատական գործում առկա Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից 2017 թվականի մարտի 3-ին տրամադրված №000031 ջրօգտագործման թույլտվությունում ջրառի վայր նշված է «ՀՀ Արմավիրի մարզ, Բաղրամյան համայնքի Շենիկ բնակավայրի վարչական տարածք», իսկ «Հայաստանի Հանրապետության

վարչատարածքային բաժանման մասին» օրենքի №2 հավելվածի «2.7. Շիրակ մարզի համայնքներն ու բնակավայրերը» վերտառությամբ գլխում բացակայում են «Բաղրամյան» և «Շենիկ» անվանումները, հետևաբար №542-24 ջրօգտագործման թույլտվությունում «Շիրակի մարզ» նշման՝ վրիպակ հանդիսանալու հանգամանքը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Տասնհինգ տարի ժամկետով երկարաձգել Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 18-ի ««ՄԱՍՖԻՇ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Վարդանանց» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №255Ա որոշմամբ «ՄԱՍՖԻՇ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված «Վարդանանց» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0403 լիցենզիայի գործողության ժամկետը, որոշման՝

1) 1-ին կետում «15 տարի» և 2-րդ կետով հաստատված հավելվածի 3-րդ կետում «մինչև 2026 թվականի մայիսի 18-ը» թվերը և բառերը փոխարինել «մինչև 2041 թվականի մայիսի 18-ը» թվերով և բառերով:

2) 1-ին կետում «Շենիկ համայնքում» բառերը փոխարինել «Բաղրամյան համայնքի վարչական տարածքում (Շենիկ բնակավայր)» բառերով, «Թալինի 2-րդ հերթի ոռոգման ջրանցքի «Շենիկ-Վանանդ» արագահոսի վրա» բառերը փոխարինել «Թալինի 2-րդ հերթի ոռոգման ջրանցքի վրա» բառերով, իսկ 2-րդ կետով հաստատված հավելվածի 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

   «5. Լիցենզավորված գործունեության իրականացման աշխարհագրական տարածքը (գործունեության վայրը) Հայաստանի Հանրապետության Բաղրամյան համայնքի վարչական տարածքն է (Շենիկ բնակավայր)՝ Թալինի 2-րդ հերթի ոռոգման ջրանցքի վրա»:

2. «ՄԱՍՖԻՇ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել «Վարդանանց» փոքր հիդրոէլեկտրակայանի շահագործման համար անհրաժեշտ ճշգրտված ջրօգտագործման թույլտվություն:

3. «ՄԱՍՖԻՇ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝

3) «Վարդանանց» փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի՝ «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված 15 տարվա ժամկետն ավարտվում է 2026 թվականի մայիսի 18-ին,
4) պարտավոր է «Էներգետիկայի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «ա1» և «ա2» կետերի համաձայն՝ արտադրության լիցենզիա ստանալու համար Հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի (այդ թվում՝ դրանցով ամրագրված իրավունքների) փոփոխության դեպքում նախապես, իսկ այդ մասին իրեն հայտնի չլինելու դեպքում տեղեկանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, ինչպես նաև արտադրության լիցենզիա ստանալու, այդ թվում՝ արտադրության (վերակառուցման) ժամանակահատված ամրագրելու համար անհրաժեշտ իրավունքն օրենսդրությամբ սահմանված կարգով դադարելու դեպքում (այդ թվում՝ իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում) այդ մասին տեղեկանալուց հետո 15-օրյա ժամկետում տեղեկացնել Հանձնաժողովին՝ ներկայացնելով փոփոխության հիմնավորումները և փոփոխված փաստաթղթերը:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի մայիսի 18-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
-- ապրիլի 2026թ.